ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2014 թվականի N 934 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 5-րդ կետը՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատումը պլանավորել յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թ. սեպտեմբերի 25
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2014 թ.
սեպտեմբերի25 -ի N 934 - Ն
որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ

NN ը/կ	Գնահատվող ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ և կազմակերպություններ	Ժամանակը
1	2	3
1.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2015 թ. մարտ
2.	ՀՀ կառարավությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե	2015 թ. ապրիլ
3.	ՀՀ բնապահպանության նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2015 թ. հունիս
4.	ՀՀ կառարավությանն առընթեր պետական զույքի կառավարման վարչություն	2015 թ. սեպտեմբեր
5.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2015 թ. նոյեմբեր
6.	ՀՀ առողջապահության նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2016 թ. ապրիլ
7.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2016 թ. սեպտեմբեր
8.	ՀՀ կառարավությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	2016 թ. հոկտեմբեր
9.	ՀՀ արդարադատության նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2017 թ. փետրվար
10.	ՀՀ մշակույթի նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2017 թ. մայիս
11.	ՀՀ կառարավությանն առընթեր ՀՀ ոստիկանություն և ստորաբաժանումներ	2018 թ. մարտ
12.	ՀՀ արտաքին գործերի նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2017 թ. հոկտեմբեր
13.	ՀՀ էնեգետիկայի և բնական պաշարների նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2018 թ. փետրվար
14.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2018 թ. ապրիլ
15.	ՀՀ սփյուռքի նախարարություն	2018 թ. մայիս
16.	ՀՀ քաղաքաշինության նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2018 թ. սեպտեմբեր

1	2	3
17.	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2018 թ. հոկտեմբեր
18.	ՀՀ ֆինանսների նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2018 թ. նոյեմբեր
19.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն և ենթակա կազմակերպություններ	2019 թ. փետրվար
20.	ՀՀ պաշտպանության նախարարություն և ստորաբաժանումներ	2019 թ. մարտ
21.	ՀՀ կառարավությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	2019 թ. ապրիլ
22.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն և ստորաբաժանումներ	2019 թ. մայիս
23.	ՀՀ կենտրոնական բանկ	2019 թ. սեպտեմբեր
24.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	2019 թ. հոկտեմբեր
25.	ՀՀ Վայոց ձորի մարզ և համայնքներ	2015 թ. փետրվար
26.	ՀՀ Գեղարքունիքի մարզ և համայնքներ	2015 թ. մայիս
27.	ՀՀ Արարատի մարզ և համայնքներ	2015 թ. հոկտեմբեր
28.	ՀՀ Արմավիրի մարզ և համայնքներ	2016 թ. մարտ
29.	ՀՀ Սյունիքի մարզ և համայնքներ	2016 թ. հունիս
30.	ՀՀ Երևան քաղաք և վարչական շրջաններ	2016 թ. նոյեմբեր
31.	ՀՀ Կոտայքի մարզ և համայնքներ	2017 թ. մարտ
32.	ՀՀ Լոռու մարզ և համայնքներ	2017 թ. ապրիլ
33.	ՀՀ Արագածոտնի մարզ և համայնքներ	2017 թ. հունիս
34.	ՀՀ Տավուշի մարզ և համայնքներ	2017 թ. սեպտեմբեր
35.	ՀՀ Շիրակի մարզ և համայնքներ	2017 թ. նոյեմբեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ